

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-529-26.03.2020-ՊԻ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 13-րդ կետով, որի համաձայն՝ խմբակցությունից դուրս եկած անկախ պատգամավորը իրավունք ունի ընդգրկվելու առնվազն երկու միջազգային խորհրդարանական կազմակերպությունների պատվիրակությունների կազմում և առնվազն հինգ միջխորհրդարանական բարեկամական խմբերի կազմում՝ համաձայն Ազգային ժողովի նախագահին ուղղված իր դիմումի, որում պատշաճ կերպով պետք է ներկայացված լինեն հիմնավորումներ իր կողմից նախընտրելի միջազգային խորհրդարանական կազմակերպություններում և բարեկամական խմբերում աշխատելու կարողության, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տիրապետման, ինչպես նաև անելիքների վերաբերյալ:

Համաձայն Նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ Օրենքով պատգամավորը ունի խմբակցության կազմից դուրս գալու և որպես անկախ պատգամավոր հանդես գալու իրավունք, որի պարագայում նա ևս պետք է իրավունք ունենա ընդգրկվելու միջազգային խորհրդարանական կազմակերպությունների պատվիրակությունների և միջխորհրդարանական բարեկամական խմբերի կազմերում:

1. Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավական կարգավորումներին:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Պատգամավորն իրավունք ունի՝

1) հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ.

2) ներկայացնելու Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ.

3) ելույթներ ունենալու, հարցեր տալու և առաջարկներ ներկայացնելու Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերում, ինչպես նաև խորհրդարանական լսումներում.

4) գրավոր հարցեր ուղղելու Կառավարությանը.

5) բանավոր հարցերով դիմելու Կառավարության անդամներին.

- 6) զբաղեցնելու իր կարգավիճակով պայմանավորված պաշտոններ.
- 7) ընդգրկվելու մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքային խմբի կազմում.
- 8) ընդգրկվելու իր հանձնաժողովի ստեղծած ենթահանձնաժողովի կազմում.
- 9) դուրս գալու խմբակցության կազմից.
- 10) ծանոթանալու Ազգային ժողովին, իր խմբակցությանը կամ հանձնաժողովին հասցեազրված ցանկացած փաստաթղթի, բացառությամբ անվանական կամ անձնական նյութերի, ինչպես նաև պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկության, որին իրավասու չէ իրազեկվելու.
- 11) հարցումներով և առաջարկներով դիմելու պետական և տեղական ինքնականավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց.
- 12) ունենալու երկու օգնական, որոնցից մեկը վճարովի, իսկ մյուսը՝ հասարակական հիմունքներով»:
- Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ և 14-րդ կետերի համաձայն՝
- «1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կազմով՝
- (...)
- 13) իր անդամին առաջարկելու միջազգային խորհրդարանական կազմակերպության, ինչպես նաև միջազգային կազմակերպություններուն հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում.
- 14) իր անդամին առաջարկելու Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում.
- (...):
- Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝
- «2. Իր լիազորություններն իրականացնելիս խմբակցությունն ընդունում է որոշումներ:
3. Խմբակցության որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած խմբակցության անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին»:
- Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝
- Խորհուրդը՝
- (...)
- 16) հաստատում է միջազգային խորհրդարանական կազմակերպություններում, միջազգային կամ հանձնաժողովներում Ազգային ժողովի պատվիրակությունների կազմերը, դրանց կազմավորման և գործունեության կարգերը,

(...)» :

Վերոգրյալ իրավական կարգավորումների բովանդակային և համակարգային վերլուծությունից բխում է, որ միջազգային խորհրդարանական կազմակերպության, միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում և Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում իր անդամին առաջարկելու իրավունքը օրենսդիրը վերապահել է խմբակցությանը՝ կարևորելով վերջիններիս կազմում Հայաստանի Հանրապետության ներկայացուցական որակյալ կազմ ունենալու հանգամանքը։ Ըստ որում, խմբակցությունների կողմից՝ իր անդամին հիշյալ կազմերում առաջարկելու իրավունքը իրացվում է բարդեցված ընթացակարգերով, մասնավորապես՝ խմբակցությունը միջազգային խորհրդարանական կազմակերպության, միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում և Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում իր անդամին առաջարկելու վերաբերյալ ընդունում է որոշում՝ քվեարկությանը մասնակցած խմբակցության անդամների ճայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին։ Այսուհետև նրանց թեկնածությունը ներկայացվում է Ազգային ժողովի խորհրդին, որն էլ հաստատում է միջազգային խորհրդարանական կազմակերպություններում, միջխորհրդարանական հանձնաժողովներում Ազգային ժողովի պատվիրակությունների կազմերը, դրանց կազմավորման և գործունեության կարգերը։

Վերոգրյալից բխում է, որ միջազգային խորհրդարանական կազմակերպության, միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում և Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում պատգամավորի ընտրությունն իրականացվում է կոլեգիալ մարմանի որոշման հիման վրա և դրա արդյունքում, այսինքն՝ վերջինս հիշյալ կազմակերպություններում կամ կազմում ընտրվում է ոչ թե Ազգային ժողովի պատգամավորին տրված լիազորության, այլ՝ խմբակցությանը օրենքով տրված իրավունքի իրացման արդյունքում, ինչն էլ ապահովում է այդ գործընթացի օրենկանականությունը և պատշաճ իրականացումը։ Հետևաբար գտնում ենք, որ պատգամավորին նման իրավունք վերապահելը չի բխում օրենսդրի՝ Օրենքի հիմքում դրած նպատակներից։

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի պատգամավորի՝ խմբակցության կազմից դուրս գալու իրավունքին և դրա արդյունքում միջազգային խորհրդարանական կազմակերպության, միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում և Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում

ընդգրկվելու հնարավորությունից զրկվելու վերաբերյալ՝ նախագծի հեղինակի վկայակոչած փաստարկներին, գտնում ենք, որ օրենսդրի կողմից խմբակցության կազմից դուրս գալը դիտարկվում է որպես բացառիկ դեպք և չի ենթադրում օրենքով խմբակցությանը վերապահված բոլոր, այդ թվում՝ նախագծով նախատեսված լիազորության ուղղակիորեն փոխանցում պատգամավորին:

Ինչ վերաբերում է պատգամավորի՝ միջազգային խորհրդարանական կազմակերպության, միջխորհրդարանական հանձնաժողովում Ազգային ժողովի կամ այլ պաշտոնական պատվիրակության կազմում և Ազգային ժողովի բարեկամական խմբի կազմում ընդգրկվելուն՝ համաձայն Ազգային ժողովի նախագահին ուղղված իր դիմումի, որում պատշաճ կերպով պետք է ներկայացված լինեն հիմնավորումներ իր կողմից նախընտրելի միջազգային խորհրդարանական կազմակերպություններում և բարեկամական խմբերում աշխատելու կարողության, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տիրապետումն, ինչպես նաև անելիքների վերաբերյալ, ապա պետք է նշել, որ Ազգային ժողովի նախագահի լիազորությունները հստակ նախատեսված են Օրենքով, և պատգամավորի աշխատելու կարողությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տիրապետումը գնահատելու լիազորություն Ազգային ժողովի նախագահին տրված չէ:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է՝ սույն առաջարկությամբ բարձրացված խնդիրների համատեքստում: